լինի՝ մեր հոգեւոր որդոյն պատուիրեալ եմք. քան զայն՝ այլ ոչ կարիւք զի-
ջանել։ Ողջ լերուք Տերամբ։

Գրեցաւ Նամակս ի Թվիս Հայոց ՌՃԲ, Նոյեմբեր ամսոյ Ե։

ԵՍ ՓԻԼԻՊՊՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԻՄՈՎ ՋԵՌՄԲՍ ԳՐԵՑԻ։

ԺԴ.

ՓԻԼԻՊՊՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ. — ՌՃԲ = 1654, ՓԵԲՐ. 12.

(Գրեալ առ Լոմացիս, զի ընկալաւ զդեսպան նոցա Խոնայ Նիկողայոս. խրատեալ
ուսանել Յովհաննեսոյ Նոռիրակի)։

Է.

ԻՍՈՒՍԻ Քրիստոսի ծառայ Փիլիպպոս կաթողիկոս ամենայն Հայոց
և պատրիարգ Վաղարշապատու տիրանկար և գերապայծառ սրբոյ
աթոռոյ Էջմիածնի. Յորմէ ժամանեալ հասցէ գիր աւրհնութեան և նա-
մակ պահպանութեան, շնորհք առաքելական, և աստուածային բազմա-
պատիկ աւրհնութիւն ի վերայ Ս. Լուսաւորչի հարազատ որդւոց հայա-
զուն ազգաց մերոց, որք ի տիրապահ և ի քրիստոսախնամ քաղաքիդ Իլովայ
կայք բնակեալ. մեղսաքաւիչ քահանայից, խորհրդաթիւ երկոտասան Դատա-
ւորաց, արգասապատիւ տօլվաթաւորաց, և առհասարակ ժողովրդոց մեծի և
փոքու. ամէն։ Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ
և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ, և ի Հոգւոյն Սրբոյ կենարարէ և յառա-
տաձիր բարերարէ և ամենազօր մարդասիրէ, և ամենունակ բաշխողէ. ամէն։
Աւրհնեսցէ զձեզ Տէր Աստուած և նախախնամեալ պահեսցէ անխռով և ան-
սասան կենաց, և զարդարեսցէ հոգւով և մարմնով, տամբք և տեղաւք, զարմաւք
և զաւակաւք, որդւովք և դստերաւք, սիրելեաւք և բարեկամաւք, ընչիւք և ապրա-
նաւք, հոգեկանաւք և մարմնականաւք. և փրկեսցէ յամենայն փորձանաց երեւե-
լեաց և աներեւութից և ամենայն որոգայթից և ի ներհակաց ճշմարտու-
թեան. ամէն։